ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն» Ազգային ժողովի որոշման նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1065-29.04.2025-ՖՎ-012/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն» Ազգային ժողովի որոշման նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1065-29.04.2025-ՖՎ-012/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք, որ Նախագիծը չի պարունակում խնդրահարույց նորմեր:

Միաժամանակ՝ Նախագծի վերնագրի լիարժեքությունն ապահովելու նպատակով «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ» բառը առաջարկում ենք փոխարինել «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերով՝ հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 118-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «*Մտքերի փոխանակության ավարտից հետո մինչև 30 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս վարչապետը (…), որից հետո քվեարկության է դրվում պետական բյուջեի կատարման մասին տարեկան **հաշվետվությունը հաստատելու մասին** Ազգային ժողովի որոշման նախագիծը*»:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248)
08.05.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248)
08.05.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ (փաստաթղթային կոդ՝ Կ-1065-29.04.2025-ՖՎ-012/0)

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Համաձայն Հաշվետվության, ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,579 մլրդ. դրամ, ծախսերը՝ 2,955 մլրդ. դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 376.1 մլրդ. դրամ:

Սույն Հաշվետվության առումով, կարծում ենք, հատկանշական կարելի է համարել հետևյալ տեղեկություններն ու միտումները:

1. 2024 թվականին գրանցվել է ՀՆԱ-ի 5.9% իրական աճ, ինչը կարելի է բավարար նախադրյալ դիտարկել: 2024 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.2%, ընդ որում՝ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 2.8%, Եվրագոտու տնտեսությունը՝ 0.9%, Չինաստանի տնտեսությունը՝ 5%, իսկ Ռուսաստանի տնտեսությունը՝ 4.1%:

2. Հաշվետու ժամանակաշրջանում գրանցված տնտեսական աճը առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների աճով՝ (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ): Արդյունաբերությունը, շինարարությունը և գյուղատնտեսությունը ևս աճել են՝ նպաստելով

տնտեսական աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 0.5, 0.9 և 0.1 տոկոսային կետեր):

3. 2024 թվականին սպառումն իրական արտահայտությամբ աճել է 1.9%-ով՝ պայմանավորված մասնավոր սպառման աճով: Մասնավոր սպառման աճին նպաստել են բնակչության տնօրինվող եկամտի և սպառողական վարկավորման աճերը: Սպառման աճին դրական նպաստում է ունեցել նաև Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված բնակչության սպառումը:

Հաշվետու տարում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 11.1%-ով՝ պայմանավորված մասնավոր պետական ներդրումների աճով: Մասնավոր ներդրումների վրա դրական ազդեցություն են ունեցել հիպոտեկային և շինարարության վարկերի ծավալների աճը:

2024 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 35.6%-ով՝ պայմանավորված արտաքին պահանջարկի, մասնավորապես՝ վերաարտահանման (հատկապես՝ դեպի ԱՄԷ) բարձր ծավալներով: Հաշվետու տարում ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 31.4%-ով՝ պայմանավորված տնտեսական ակտիվությամբ և վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ:

4. 2024 թվականին միջին գնաճը կազմել է 0.3%: Միջին գնաճին առավելապես նպաստել է «Ծառայություններ» ապրանքախմբում արձանագրված 3% գների աճը (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորված է եղել հանգստի կազմակերպման համալիր ծառայությունների, տրանսպորտի ծառայությունների (մասնավորապես՝ օդային մարդատար տրանսպորտի ծառայությունների) և միջնակարգ կրթության ծառայությունների սակագների աճերով: «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրվել է -2% միջին գնաճի ցուցանիշ (նպաստումը գնաճին՝ -0.8 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (յուղեր և ճարպեր, ձուկ և ծովամթերք, հացաբուլկեղեն և ձավարեղեն, բանջարեղեն) գնանկմամբ: «Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» խմբում արձանագրվել է 5.4% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.2 տոկոսային կետ), իսկ «Ոչ պարենային ապրանքներ» խմբում արձանագրվել է -0.8% գնաճ (նպաստումը գնաճին՝ -0.2 տոկոսային կետ):

5. 2024 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 3.9%-ը: Այն հիմնականում պայմանավորված է ծառայությունների հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև սկզբնական եկամուտների նվազմամբ: Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2024 թվականին նվազել են շուրջ 22%-ով՝ պայմանավորված ինչպես ներհոսքի նվազմամբ (հատկապես՝ ՌԴ-ից), այնպես էլ դեպի այլ երկրներ արտահոսքի ավելացմամբ: Նշված զարգացումների արդյունքում 2024 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է 1.6 տոկոսային կետով:

2024 թվականին գրանցվել է արտաքին ապրանքաշրջանառության երկնիշ աճ՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման բարձր ծավալներով: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2024 թվականի արդյունքներով կազմել է 30,159 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 41.5%-ով: Հաշվետու տարում արձանագրվել են դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման երկնիշ աճեր. արտահանումն աճել է 53.1%-ով՝ կազմելով 13,092 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 33.8%-ով՝ կազմելով 17,066 մլն ԱՄՆ դոլար: 2024 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել է (5.5%-ով) և կազմել -3,975 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման ծավալների աճին հիմնականում նպաստել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (36.4 տոկոսային կետով՝ վերաարտահանմամբ պայմանավորված), «Մեքենաներ և սարքավորումներ» (1.4 տոկոսային կետով), «Պատրաստի սննդի արտադրանք» (0.8 տոկոսային կետով) ապրանքախմբերը: Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման՝ ներմուծման աճին նպաստել են «Միջանկյալ սպառման ապրանքները» (37.8 տոկոսային կետ, այդ թվում՝ արդյունաբերական մատակարարումները՝ 37.5 տոկոսային կետ), «Վերջնական սպառման ապրանքները» (1.7 տոկոսային կետ) և «Կապիտալ ապրանքները» (0.6 տոկոսային կետ), իսկ «Մարդատար ավտոմեքենաները» (6.3 տոկոսային կետ) հակազդել են:

6. 2024 թվականին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ միջինում չնչին արժեզրկվել է, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ շարունակել է արժևորվել՝ պայմանավորված արտարժույթի ներհոսքի դանդաղմամբ: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 2024 թվականին ՀՀ դրամն արժեզրկվել է 0.1% ով:

7. 2024 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 2,579 տրիլիոն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7%-ով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.47%՝ նախորդ տարվա 25.5%-ի դիմաց, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ՀՆԱ ի նկատմամբ հարկային եկամուտների կշռի նվազմամբ:

Պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,955 տրիլիոն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.7%-ով: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2023 թվականի նկատմամբ ավելացել է 1.7 տոկոսային կետով՝ կազմելով 29.2%:

ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 3.7%՝ նախորդ տարվա 2% ցուցանիշի համեմատությամբ: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 48.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.1 տոկոսային կետով:

ՀՀ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

8. ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով տարեկան եկամուտները սահմանվել էին 2,724 տրիլիոն դրամ: Տարվա ընթացքում պետական բյուջեի ցուցանիշներում ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես, Կառավարությունն իր լիազորությունների շրջանակում վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը՝ ընդհանուր առմամբ նվազեցնելով 31.3 մլրդ դրամով (1.1%-ով): Մասնավորապես՝ ծրագիրը 34.9 մլրդ դրամի չափով նվազեցվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ տնտեսական աճի տեմպի դանդաղելու արդյունքում, 2.6 մլրդ դրամի չափով նվազեցվել է պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը՝ պայմանավորված նպատակային ծրագրերի կատարողականով, իսկ այլ եկամուտների ծրագիրն ավելացվել է 5.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարիներին պետական բյուջեից ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների (բացառությամբ փոխառու միջոցների) վերադարձից լրացուցիչ մուտքերով:

2024 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,579 տրիլիոն դրամ՝ ապահովելով հաստատված տարեկան ծրագրի 94.7% կատարողական, իսկ Կառավարության կողմից ճշտված ծրագրի՝ 95.8% կատարողական: Նշված գումարից 2,553 տրիլիոն դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով սկզբնական ծրագրի 94.5%-ը և ճշտված ծրագրի 95.5%-ը, 26.7 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով, որոնք 20%-ով գերազանցել են սկզբնական և

35.9%-ով՝ ճշտված ծրագրային ցուցանիշը: 2023 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 9.3% (220.4 մլրդ դրամ) աճ, իսկ առանց հիպոտեկային վարկերի վճարված տոկոսների գումարի՝ աճը կկազմի 6.4% կամ 151.9 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների և այլ եկամուտների աճով:

2024 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 25.5%՝ բյուջեով կանխատեսված 25.9%- ի և նախորդ տարվա 25%-ի դիմաց:

9. Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են շուրջ 2,391 տրիլիոն. դրամ, որոնք 91.5-% ով ապահովել են օրենքով հաստատված ցուցանիշը և 92.7%-ով՝ ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: 2023 թվականի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 7.6%-ով կամ 169 մլրդ դրամով: 2023 թվականի համեմատ հարկատեսակների մեծ մասի գծով արձանագրվել է մուտքերի աճ: Հարկ է նշել, որ 2024 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա դրական ազդեցություն են ունեցել տնտեսական ակտիվության աճը, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը: Միաժամանակ, 2024 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել ԱԱՀ-ի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, սոցիալական վճարների և շահութահարկի գծով վերադարձված գումարների աճը, որոնք կազմել են 323.9 մլրդ դրամ՝ 4.2%-ով (13 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2024 թվականին կազմել է 23.6%, որը 1.3 տոկոսային կետով զիջել է կանխատեսված ցուցանիշը և 0.1 տոկոսային կետով՝ գերազանցել 2023 թվականի փաստացի ցուցանիշը:

10. 2024 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 31.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 755.9 մլրդ դրամ: Նշված գումարից 435.2 մլրդ դրամը ստացվել է ներմուծման հարկումից, 320.7 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2023 թվականի համեմատությամբ ԱԱՀ-ի գծով մուտքերը նվազել են 11.3 մլրդ դրամով: Նախորդ տարվա համեմատ ԱԱՀ-ի մուտքերի նվազումը պայմանավորված է ՀՀ ներմուծվող ապրանքների գծով մուտքերի նվազմամբ:

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.1%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 146.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների

հարկումից ստացվել է 60.0 մլրդ դրամ, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 86.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ակցիզային հարկի մուտքերի 2.9 մլրդ դրամով նվազումը հիմնականում պայմանավորված է ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների ծավալների նվազմամբ:

2024 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 14%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 335.7 մլրդ դրամ և 4.4%-ով (14.2 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերի վրա իր ազդեցությունն է ունեցել ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահութահարկի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազաների աճը: Մասնավորապես, 2024 թվականին ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համախառն եկամուտները կազմել են 17,169 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24.5%-ով կամ 3,378.4 մլրդ դրամով: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների հարկվող շահույթը 2024 թվականին կազմել է 1,651 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 6.1%-ով կամ 94.4 մլրդ դրամով: Ռեզիդենտ շահութահարկ վճարողների՝ աղբյուրի մոտ պահվող 2024 թվականի եկամուտները կազմել են 546.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.1%-ով կամ 0.5 մլրդ դրամով, իսկ վճարված եկամուտներից պահված հարկերը կազմել են 27 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 22% ով կամ 4.9 մլրդ դրամով:

Հաշվետու տարում 650.1 մլրդ դրամ են կազմել եկամտային հարկի մուտքերը՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 27.2%-ը: Նախորդ տարվա համադրելի (առանց հիպոտեկային վարկերի վճարված տոկոսների գումարի) ցուցանիշի համեմատ եկամտային հարկի 4.9% (27 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է 2024 թվականին աշխատատեղերի և միջին աշխատավարձերի աճով: Մասնավորապես, 2024 թվականին գրանցված աշխատատեղերի թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 5.5%-ով, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 6.2%-ով:

2024 թվականին պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է 76.2 մլրդ դրամ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 3.2%-ը: 2024 թվականի ընթացքում ԵԱՏՄ երկրներից (այդ թվում՝ ՀՀ-ից) մաքսատուրքերի բաշխման արդյունքում ստացվել են 74.1 մլրդ դրամ մուտքեր: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքերի գծով մուտքերի աճը կազմել է 0.9 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների ծավալների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2.5%-ն ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 60.9 մլրդ դրամ և 16.7%-ով (8.7 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է տնտեսական ակտիվության աճով այն ոլորտներում, որտեղ գործում են շրջանառության հարկով հարկվող գործունեություն ծավալող հարկ վճարողները: Մասնավորապես, 2024թ. առևտրի ծավալներն աճել են 7.9%-ով, արդյունաբերական արտադրանքի ծավալները՝ 6.4%-ով, իսկ ծառայությունների ծավալները՝ 10.6%-ով:

2024 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 4.2%-ն ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հաշվին: 2024 թվականին դրանց գծով մուտքերը կազմել են 100.5 մլրդ դրամ 2023 թվականի 60.6 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 103.4 մլրդ. դրամ են կազմել սոցիալական վճարները, 47.7 մլրդ դրամ՝ դրոշմանիշային վճարները, 8.8 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 6.2 մլրդ դրամ՝ ճանապարհային հարկի գծով փաստացի մուտքերը:

11. 2024 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 80.5 դրամ պետական տուրքեր՝ 19.7%-ով գերազանցով կանխատեսված ցուցանիշը և 19.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Դա հիմնականում պայմանավորված է եղել լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու ու օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար սահմանված պետական տուրքերով:

12. 2024 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 26.7 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ 35.9%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, որը պայմանավորված է չնախատեսված բյուջետային աջակցության դրամաշնորհների ստացմամբ:

13. 2024 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 161.6 մլրդ դրամ՝ 73.2%-ով գերազանցելով տարեկան ծրագրված ցուցանիշը: Գերազանցումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների և օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ: Հարկ է նշել, որ ծրագրի զգալի գերազանցում է արձանագրվել բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված մուտքերի գծով:

ՀՀ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

14. 2024 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 2,955 տրիլիոն դրամ: Պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 93.9%-ով, շեղումների ընդհանուր գումարի 47.3%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 52.7%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 97.7%-ը կամ շուրջ 2,889 մլրդ դրամը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 94%-ով: Բյուջեի ծախսերի 2.3%-ը՝ 66.5 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է տարեկան ծրագրի 87.8% ը:

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 16%-ով կամ 407.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված սոցիալական նպաստների և կենսաթոշակների, կապիտալ ծախսերի և տոկոսավճարների աճով:

15. ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 2,414 տրիլիոն դրամ: Հաշվետու տարում շուրջ 242.7 մլրդ. դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն աճել են 24.7 մլրդ դրամով:

16. 2024 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 541.7 մլրդ դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշի՝ ծրագրից 35.8% (101.9 մլրդ դրամ) շեղումը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերով (կապիտալ ծախսերով):

ՀՀ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

17. ՀՀ 2024 թվականի պետական բյուջեն կատարվել է է 376.1 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրի 82.4%-ը և 99.1%-ով (187.2 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2024 թվականին պակասուրդի համեմատաբար ցածր մակարդակ է արձանագրվել ՀՆԱ-ի նկատմամբ, որը կազմել է 3.7%՝ կանխատեսված 4.6%-ի դիմաց, սակայն նախորդ տարվա համեմատ պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշն աճել է 1.7 տոկոսային կետով:

2024 թվականին պակասուրդը գերազանցապես՝ 95.5%-ով ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին:

19. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,093 տրիլիոն դրամ (12.8 մլրդ ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշների աճը նախորդ տարեվերջի համեմատությամբ կազմել է համապատասխանաբար 6.2% և 8.4%: ՀՀ պետական պարտքում 2,559.5 տրիլիոն դրամը (6,454.2 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,533 տրիլիոն դրամը (6.4 մլրդ ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատ դրամային արտահայտությամբ աճել է 297.8 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 996.8 մլն ԱՄՆ դոլարով: Դրամային և դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի աճով՝ համապատասխանաբար 7%-ով և 9.2%-ով:

ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը պետական պարտքի ծավալում կազմել է 96.1%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կշիռը՝ 3.9%:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 50.3%-ը՝ նախորդ տարեվերջի համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով: Ընդ որում կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 48.3%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
Կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան (Հեռ.՝ 011 513-603)
14.05.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Կառավարության կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն): Այն համապատասխանում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին:

Սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից հատկանշական ենք համարում հետևյալ փաստերի և միտումների արձանագրումը:

1. ՀՀ 2024թ. պետական բյուջեի ծախսերի՝ Օրենքով հաստատված ծրագրով և ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակում ճշտված ծրագրով ծախսերի զգալի մասն ուղղվել է 3 ոլորտների՝ սոցիալական պաշտպանությանը, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին և պաշտպանությանը: Դրանից ելնելով՝ փաստացի ծախսերի 70.1%-ը բաշխվել է նշված 3 ոլորտներին (գործառական դասակարգման բաժիններին)՝ սոցիալական պաշտպանությանը՝ 28.8% (851.9 մլրդ դրամ), ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին՝ 22.7% (671.3 մլրդ դրամ) և պաշտպանությանը՝ 18.6% (549 մլրդ դրամ):

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի փաստացի ծախսերում հիմնականում ավելացել է սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտների մասնաբաժինը և նվազել՝ պաշտպանության և տնտեսական հարաբերությունների մասնաբաժինը:

2. 2024 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նկատմամբ աճել է 6.4%-ով՝ կազմելով 287,172 դրամ: Աշխատավարձի աճին հիմնականում

նպաստել են մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, մշակող արդյունաբերության, շինարարության, ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտների աշխատավարձերի աճը:

3. 2023թ. համեմատ կենսաթոշակների գծով ծախսերի աճը հիմնականում արձանագրվել է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների հաշիվներին կատարված հատկացումների գծով, որոնք կազմել են 181.9 մլրդ դրամ՝ 26.7%-ով կամ 38.4 մլրդ դրամով գերազանցելով 2023թ. ցուցանիշը՝ պայմանավորված մասնակիցների թվի և միջին ամսական անվանական աշխատավարձի աճով, ինչպես նաև աշխատանքային կենսաթոշակների գծով ծախսերում, որոնք 12.5%-ով (32 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված 2023թ. հուլիսի 1-ից կենսաթոշակների չափերի բարձրացմամբ և կենսաթոշակառուների թվաքանակի աճով (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեից տրամադրված նպաստները և կենսաթոշակները (մլրդ դրամ)

	2023թ. փաստ	2024թ. ճշտված ծրագիր	2024թ. փաստ	Կատարողա-կանը ճշտված ծրագրի նկատմամբ (%)	2024թ. 2023թ.-ի նկատմամբ (%)
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	**710.2**	**1,051.7**	**1,026.2**	**97.6**	**144.5**
Նպաստներ	270.3	525.4	507.3	96.6	187.7
Կենսաթոշակներ	439.9	526.3	518.9	98.6	118.0

4. ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատվությամբ 2024թ. ընթացքում կատարվել են 12 ծրագրեր, որոնցից 10-ում արձանագրվել են շեղումներ, իսկ 2 ծրագրի համար նախատեսված 66.2 մլրդ դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Նշենք, որ ՀՀ կառավարության 2023թ. ապրիլի 27-ի N 614-Ն որոշմամբ տեղի է ունեցել

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի փոփոխություն՝ ՀՀ արդարադատության նախարարության փոխարեն լիազորված պետական մարմին է սահմանվել ՀՀ առողջապահության նախարարությունը, որի արդյունքում «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին պատշաճ բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ» միջոցառումը փոխանցվել է ՀՀ ԱՆ-ին (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

2024թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2023թ փաստ	2024թ. ճշտված պլան	2024թ. փաստ	Կատարողական ճշտված պլանի նկատմաբ (%)	2024թ. 2023թ.-ի նկատմամբ (%)	2024թ. և 2023թ. տարբե-ությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**139,843.9**	**168,392.3**	**153,842.8**	**91.4**	**110.0**	**13,998.9**
Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	4,367.5	2,961.5	2,311.4	78.0	52.9	(2,056.2)
Առողջության առաջնային պահպանում	29,346.4	31,481.6	31,261.9	99.3	106.5	1,915.5
Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	6,300.4	10,022.1	6,799.1	67.8	107.9	498.7
Դեղապահովում	3,870.4	6,269.8	6,247.3	99.6	161.4	2,376.9
Մոր և մանկան առողջության պահպանում	21,261.4	23,076.0	23,075.4	100.0	108.5	1,814.0
Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	21,830.6	34,446.8	24,426.1	70.9	111.9	2,595.5
Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	37,313.1	43,106.5	43,106.5	100.0	115.5	5,793.4
Այլ ծրագրեր	15,554.1	17,028.0	16,615.0	97.6	106.8	1,060.9

2023 թվականի համեմատ առողջապահության նախարարության ծախսերը աճել են 10.3%-ով կամ 14 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն», «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում», «Դեղապահովում» և «Առողջության առաջնային պահպանում» ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվության ներքո 2024 թվականի ընթացքում իրականացվել են 23 ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 285.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 80.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնման, կառուցման, բարելավման ծրագրի կատարողականով:

Աղյուսակ 3

2024թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2023թ. փաստ (2024թ. հետ համադրելի)	2024թ. ճշտված պլան	2024թ. փաստ	Կատարողական ճշտված պլանի նկատմամբ (%)	2024թ. 2023թ.-ի նկատմամբ (%)	2024թ. և 2023թ. տարբե-րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**230,991.0**	**353,097.7**	**285,653.9**	**80.9**	**123.7**	**54,662.9**
Հանրակրթության ծրագիր	110,209.5	126,924.6	126,642.7	99.8	114.9	16,433.3
Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	22,766.8	35,001.8	32,074.7	91.6	140.9	9,307.9
Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	12,210.7	14,846.9	14,191.2	95.6	116.2	1,980.5
Կրթության որակի ապահովում	6,873.0	14,914.7	13,800.7	92.5	200.8	6,927.7
Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	8,390.6	85,024.1	29,971.2	35.3	357.2	21,580.6
Այլ ծրագրեր	70,540.4	76,385.5	68,973.4	90.3	97.8	(1,567.0)

6. 2024 թվականի ընթացքում ավելի քան 126.6 մլրդ դրամ է տրամադրվել *Հանրակրթության ծրագրի* շրջանակներում՝ ապահովելով 99.8% կատարողական և նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ (առանց նախադպրոցական կրթության ծախսերի, որոնք առանձնացվել են նոր՝ նախադպրոցական կրթության ծրագրերում) ծրագրի ծախսերն աճել են 14.9%-ով կամ 16.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ընդհանուր հանրակրթության ծախսերի աճով:

Ընդհանուր հանրակրթության ծախսերը 2024թ. կատարվել են 100%-ով՝ կազմելով 113.9 մլրդ դրամ: Աճը պայմանավորված է 2023թ. սեպտեմբերից հանրակրթական դպրոցների նոր՝ ըստ դասարանների թվի, ֆինանսավորման մոդելի ներդրմամբ՝ նախկինում գործող՝ աշակերտների թվի հիման վրա ֆինանսավորման համակարգի փոխարեն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 5-ի № 1713-Ն որոշման համաձայն հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդողների դրույքների փոփոխությամբ: Ծախսերի աճը պայմանավորված է նաև սովորողների թվի ավելացմամբ, որն, իր հերթին, պայմանավորված է 2023թ. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սովորողների ներառմամբ (տես աղյուսակ 4-ը):

Աղյուսակ 4

Ընդհանուր հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2023թ. սովորողների թիվ	2024թ. սովորողների թիվ	2024թ. և 2023թ. տարբերությունը	2023թ. փաստ (մլն դրամ)	2024թ. փաստ (մլն դրամ)	2024թ. 2023թ.-ի համեմատ (%)
Ընդհանուր հանրակրթություն	**392,887**	**408,190**	**15,303**	**100,394.3**	**113,850.2**	**113.4**
Տարրական	150,158	154,277	4,119	37,398.1	40,124.4	107.3
Հիմնական	183,036	191,304	8,268	44,650.5	50,818.4	113.8
Միջնակարգ	59,693	62,609	2,916	18,345.7	22,907.4	124.9

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ 2024 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի 17 ծրագիր, որոնց շրջանակներում օգտագործվել է 852.5 մլրդ դրամ՝ ապահովելով

տարեկան ծրագրված ցուցանիշի 97%-ը և 20.8%-ով կամ 146.9 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը (տես աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5

2024թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2023թ. փաստ (2024թ. հետ համադրելի)	2024թ. ճշտված պլան	2024թ. փաստ	Կատարող-ական ճշտված պլանի նկատմամբ (%)	2024թ. 2023թ.-ի նկատմամբ (%)	2024թ. և 2023թ. տարբերությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**705,654.0**	**878,536.3**	**852,518.3**	**97.0**	**120.8**	**146,864.3**
Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	26,816.6	27,657.4	24,002.3	86.8	89.5	(2,814.2)
Ժողովրդագրական վիճակի բարելավում	53,593.8	69,750.8	66,661.5	95.6	124.4	13,067.8
Կենսաթոշակային ապահովություն	440,752.4	527,057.9	519,641.1	98.6	117.9	78,888.8
Սոցիալական ապահովություն	91,136.3	109,629.0	108,381.0	98.9	118.9	17,244.7
Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	28,746.0	65,674.5	60,631.2	92.3	210.9	31,885.2
Այլ ծրագրեր	64,609.1	78,766.7	73,201.1	92.9	107.6	(5,565.7)

Նշենք, որ նախկինում ՏԿԵՆ պատասխանատվությամբ իրականացվող «Աջակցություն փախստականների ինտեգրմանը» ծրագրի 3 միջոցառումներ 2024թ. փոխանցվել են ԱՍՀՆ-ին: Նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է նշված վերջին 3 ծրագրերի, ինչպես նաև Սոցիալական ապահովության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվությամբ 2024 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի 6 ծրագիր, որոնց ընդհանուր ծախսերը կազմել են ավելի քան 9.3 մլրդ դրամ՝ ապահովելով 83.9% կատարողական: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության ծախսերում զգալի տեսակարար կշիռ ունեցող «Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում» ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նախարարության ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 3.3%-ով կամ 301.3 մլն դրամով (տես աղյուսակ 6-ը):

Աղյուսակ 6

2024թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2023թ. փաստ	2024թ. ճշտված պլան	2024թ. փաստ	Կատարո-ղական ճշտված պլանի նկատմամբ (%)	2024թ. 2023թ.-ի նկատմամբ (%)	2024թ. 2023թ. տարբե-րությունը
Ընդամենը	**9,023.8**	**11,112.7**	**9,325.2**	**83.9**	**103.3**	**301.3**
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ	1,999.0	2,682.2	2,251.4	83.9	112.6	252.4
Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	1,318.3	1,365.3	1,354.8	99.2	102.8	36.6
Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում	496.0	322.6	271.3	84.1	54.7	(224.7)
Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում	1,928.8	2,216.0	1,337.8	60.4	69.4	(591.1)
Անտառների կառավարում	3,931.2	4,484.1	4,067.4	90.7	138.8	1,136.2
Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն	350.5	42.5	42.5	100.0	12.1	(308.0)

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-235, 12-35)

13.05.2025թ.